



Համալսարանական
կրթությամբ կանանց
սոցիալիզմ

1995
2010

Անտիոքսիդանտ 15-ամյալի անհիշատակ

*«Կանանց անհիշատակ և առանց
ժողովրդավարության
և՛ բնականության
հասարակության կայուն»*

ՀԱՄԱԺՈՂՈՎԱ

ԱՆՅԿԱՅՎՈՒՄ Է

«Կանանց շարժումը

ՀԱՉԱՐԱՄՅԱԿԵՐԻ ՆԱԶԱՐՈՒԿՈՒՄ.

ԱՌՐ ԺԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ

ՆԱԶԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

**Համալսարանական կրթությամբ
կանանց ասոցիացիան
իր հիմնադրման
15-ամյակի կապակցությամբ**

**«ԿԱՆԱՆՉ ԱԵՐՈՒԺԱՆ Ի ԱՊՊԱՏ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՔԱՂԱՔԱՅԻՆԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ»**

**ԱԿՅԻՋԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՅԿԱՅԻՆ Է
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ՝**

Մարջարիտ ՀԱՄԱԺՈՂՈՎԱՆԵՐ Գլուխնախարար,
Վանաձորում, Արտաշատում, Հրազդանում,
Աշտարակում,

ԿՂՈՐ ԱՆՊԱՆՆԵՐ Արուսյանում, Նոր Հաճընում,
Եղվարդում, Չարենցավանում, Մասիսում, Վեդիում,
Արարատում, Էջմիածնում, Սեւանում,
Ստեփանավանում, Սպիտակում, Ալավերդիում,
Տաշիրում, Արթիկում, Ախուրյանում, Մարալիկում,
Թալինում, Գիլիջանում:



**ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԳՈՐԾՈՒՄ ԵՆ**

- Կանանց լիդերության դպրոցը,
- Գենդերային հետազոտությունների կենտրոնը,
- «Գործողությունների քաղաքականություն» տեղեկատվական-վերլուծական կենտրոնն իր էլեկտրոնային ցանցով,
- Կանանց լիդերության դպրոցը,
- Ժողովրդավարության եւ խաղաղության կենտրոնը,
- Քաղաքացիական նախաձեռնությունների չորս կենտրոնները:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ

*իրականացրել է գենդերային կրթության
ինստիտուցիոնալացման գործընթաց
հանրապետության 12 բուհերում և
33 հանրակրթական դպրոցներում:*

Կազմակերպվել են.

- գենդերային 3 դպրոց,
- ուսանողների և երիտասարդ հետազոտողների 7 խորհրդաժողով,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորների և դասախոսների, հանրակրթական դպրոցների տնօրենների և ուսուցիչների գիտաժողովներ, կլոր սեղաններ, սեմինարներ,
- ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և փորձագետների, պետական կառավարման մարմինների աշխատողների գենդերային իրազեկության բարձրացման սեմինարներ:



Հրատարակվել են.

«Գենդերային հետազոտություններ» մատենաշարի 31 հայերեն, 7 ռուսերեն և անգլերեն ժողովածուներ, 11 ուսումնական ձեռնարկներ, ուսանողների և երիտասարդ հետազոտողների խորհրդաժողովների նյութերի 7 ժողովածու:



Ժողովրդավարության ԵՒ ԽԱՂԱՀՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

աշխատանքները նպատակաուղղված են.

- քաղաքացիական հասարակության մեջ հանդուրժողականության, փոխադարձ վստահության, երկխոսության և փոխըմբռնման սկզբունքների վրա հիմնված ժողովրդավարական արժեքների հաստատմանը,
- հասարակության ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասին գիտելիքների տարածմանը,
- նոր էգալիտար ժողովրդավարական մշակույթի ձևավորմանը, հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների գաղափարախոսության արմատավորմանը,
- կանանց քաղաքացիական և քաղաքական ակտիվության բարձրացման միջոցով ժողովրդավարական վերափոխումների գործընթացներում նրանց ներգրավմանը,
- հասարակության մեջ խաղաղության մշակույթի ձևավորմանը, միջպետական հարաբերություններում քաղաքակրթությունների երկխոսության ու համաձայնության ապահովմանն ուղղված կանանց նախաձեռնությունների զարգացմանը:



Կենտրոնի գործունեության ընթացքում Երևանում, Գյումրիում, Վանաձորում և մարզերում կազմակերպված 102 կլոր սեղանների քննարկումների, բանավեճերի և երկխոսությունների մասնակցել են հասարակական շարժման և քաղաքական կուսակցությունների ավելի քան 3000 ակտիվիստ՝ կանայք և տղամարդիկ, որոնք շահագրգռված են Հայաստանում ժողովրդավարական գործընթացների զարգացման համար:

Կենտրոնի շրջանակներում անցկացվել է 11 միջազգային խորհրդաժողով:



ԿԱՆԱՆՅ լիդերութեան դուրոճ

2000-2010 թթ. դպրոցում անցկացված 26 հոսքերի «Հասարակական գործունեության կազմակերպում» և «Բարձրագույն քաղաքական դասընթացներ» ծրագրերով սովորել և ավարտական վկայականներ են ստացել Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի, գործընկեր հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների 1000 կին լիդեր և ակտիվիստ:



Գյումրիում, Վանաձորում, Ստեփանավանում, Սպիտակում, Դիլիջանում, Արտաշատում, Արարատում, Աշտարակում, Էջմիածնում, Հրազդանում, Աբովյանում, Սևանում, Եղվարդում, Նոր Հաճընում, Սպիտակում Ասոցիացիայի մասնաճյուղերի և քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնների ստեղծած 19 կանանց լիդերության դպրոցները տվել են ավելի քան 500 շրջանավարտ:



2011 թ. մարտի 19-ին սկսվել են ԿԱՆԱՆՅ լիդերութեան դուրոճի 27-րդ շուքի «Բարձրագույն քաղաքական դասընթաց» և ՈՐՈՒՅՎԱԾ ՈՒՄՈՒՅՄԱՆ ՊԱՐԱՊՈՒՄՆԵՐԸ:

«Գործողությունների քաղաքականություն» Տեղեկատվական-վերլուծական Կենտրոնը

իր աշխատանքները նպատակաուղղել է.

- Ասոցիացիայի մասնաճյուղերի գործունեության արդյունավետության բարձրացմանը և կրթական ծրագրերի ապահովմանը,
- բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատություններում զենդեռային կրթության ուսումնամեթոդական ապահովմանը,
- խորհրդատվողների և համաժողովների նյութերի նախապատրաստմանը և հրատարակմանը,
- Ասոցիացիայի վերկայքի ստեղծմանը, Ասոցիացիայի գործունեության մասին տեղեկատվության պարբերական նորացմանը և նոր հրատարակումների գետեղմանը,
- Ասոցիացիայի գործունեության լուսաբանմանը լրատուներում և ժողովածուներում:



Կենտրոնը 1997-2010 թթ. հրատարակել է ավելի քան 90 ժողովածու՝ նվիրված քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության, զենդեռային հավասարության և օրենսդրության զենդեռային փորձաքննության, խաղաղության մշակույթի և քաղաքակրթությունների երկխոսության հիմնախնդիրներին:

Հրատարակվել են 11 միջազգային խորհրդատվողների, 2 համաժողովի և 7 ուսանողական խորհրդատվողների նյութերի ժողովածուներ, սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների 9 ժողովածու:



Տպագրվել է «Համալսարանական կրթությանը կանայք» լրատուի 56 համար՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ինչպես նաև՝ «Կանանց երկխոսություն» թերթի 10 համար, որոնցում ներկայացվել է Ասոցիացիայի գործունեությունը:

ԱՆՉՐԱՅՐԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒՄ Է

- Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունների,
- ԱՊՀ եւ այլ արտասահմանյան երկրների կանանց կազմակերպությունների,
- գենդերային հետազոտությունների եւ տեղեկատվական կենտրոնների,
- Գիտական հիմնարկների եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:



Ասոցիացիան Համալսարանական կանանց միջազգային ֆեդերացիայի (IFUW) անդամ է:

Համագործակցում է Եվրոպայի, ԱՄՆ-ի և Կանադայի համալսարանական կանանց ասոցիացիաների հետ:

Ասոցիացիայի լիդերները և փորձագետները Վարչապետություն և Վիեննայում մասնակցել են ԵԱՀԿ-ի մարդկային չափմանը նվիրված ամենամյա հանդիպումներին, ժնկում՝ «Պեկին+5» (2000 թ.) և «Պեկին+10» (2005 թ.) համաժողովներին, 2000 թ. Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի «Կանայք 2000 թվականին. տղամարդկանց և կանանց հավասարություն. զարգացում և խաղաղություն XXI դարում» 23-րդ հատուկ նստաշրջանին, ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 54-րդ և 55-րդ նստաշրջաններին, Մոսկվայում, Կիևում, Տալլինում, Թբիլիսիում, Բաքվում, Բիշկեկում, Ստամբուլում, Գրացում (Ավստրիա), Օտտավայում, Նյու Յորքում և այլ քաղաքներում՝ կանանց շարժման և գենդերային հիմնախնդիրներին նվիրված խորհրդաժողովներին և հանդիպումներին:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՅԻԱՆ

- հասարակական (ոչ կառավարական), շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է,
- հիմնադրվել է 1995 թ. դեկտեմբերի 13-ին, Երևանում,
- միավորում է բարձրագույն կրթությամբ կանանց՝ անկախ տարիքից, ազգությունից, դավանանքից եւ քաղաքական հայացքներից,
- գործում է իրավահավասարության, կամավորության, ինքնակառավարման եւ հրապարակայնության սկզբունքով:

ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է

- նպաստել Հայաստանում ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության ձևավորմանը,
- աջակցել մարդու իրավունքների պաշտպանության նախաձեռնություններին, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովմանը,
- աջակցել հասարակության մեջ կանանց կարգավիճակի բարձրացմանը, կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցության ակտիվացմանը, գենդերային խտրականության և գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը,
- աջակցել քաղաքացիական նախաձեռնություններին խթանմանը, խաղաղության մշակույթի քարոզչությանը և խաղաղասիրական գործընթացների իրականացմանը:

Ասոցիացիան ունի 35 մասնաճյուղ Երեւանում

ԵՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԻՉԵՐՈՒՄ:

Ասոցիացիան գործում է որպես մի կառույց, որը ազգային ու միջազգային մակարդակներով զբաղվում է քաղաքացիների իրավունքների պաշտպանությամբ, սոցիալական լոբբինգով, գիտական եւ կրթական, տեղեկատվական-վերլուծական ու խորհրդատվական գործունեությամբ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՅԻԱ

✉ Երեւան 0002, Սարյան 22

☎ /37410/ 53-68-02

☎ /37410/ 53-67-92

E-mail: awue.armenia@gmail.com